

դրել եւ նմա դառանձին թուղթ, այլ չեղաք ձեռնհաս:

Բարձր պատուոյ արժանաւոր Յովհաննէս վարդապետ Անդամակից եւ Ատենա-դպիր սրբազան Սիւնհոգոսի:

Ճանաչելով զսիրելիդ իմ հաւատարիմ առ իս յամենայն՝ առաջի առնեմ, զի ընդ ստանալ ձեր զօրինակ վճռադրոյն վասն Յարութիւն վարդապետի Ալամդարեանց՝ զոր առաքեցի նորոգ առ Սիւնհոգոսն ի հաստատել, փոյթ կալլիք զկատարմանէ նորին ոչ անագան՝ վաւերացուցեալ հաստատութեամբ Անդամոց խորհրդարանին: Եւ ի պարբերութեան անդ՝ ուր խաչանշանաւ Խրանն որոշի, ուչ ի կուրծս բերեալ տեսլիք, թէ հրամանն՝ որ առ Ալամդարեանն գնալ ի Տփլիսայ աստի ի Հաղբատ, ի դիմաց սրբազան կաթողիկոսի՞ գրեցաւ՝ թէ Սիւնհոգոսի. եւ որպէս զիարդ եղեալ իցեն իրքն, ըստ այնմ՝ յարմարեալ ամբողջացուցիք զբանն. զորոյ եւ զպատճէնն յետ հաստատութեան՝ հանդերձ առաջնոյ վճռադրոյն օրինակաւ՝ զոր նախ քան զսոյն առաքեալ էր իմ առ Սիւնհոգոսն, հասուցի՞ք առ իս:

Այլ հարկաւոր գիտելիք ծանուցեն ձեզ ի թղթոց մեր՝ որ առ բարձր սրբազան Արքեպիսկոպոսն Բարսեղ:

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանի Յովհաննէս:

Թիւ 257.

Ի 30 Մայիսի 1831, ի Տփլիս:

Մանուկն Մկրտիչ որդեակն իմ եւ ձեր եղբ՝ արդեօք զբոյժ յախտէն՝ զոր ունէր, ծանուցիք ինձ: Զսիրեցեալն յինէն Խաչատուր Էլիմիրզեանց ընդ յատուկ ակնարկութեամբ ձեր ունելով՝ փոյթ կալլիք պահել զնա սրտադիւր յամենայն, եւ լինել վերահասու յամենայն ի գործս պաշտաման նորա:

Ի Թիֆլիսոյ, ի Յովհաննէս սրբազանէն առ իս, ի 36 Մայիսի 1831, ի 7 Յունիսի ստացեալ պատասխանին գրեցաւ:

Ռ. ԱՅՐԱՆԱՍԻՆ



ԱՐԵՎԷ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒՆ ՄԷՋ

(Շարունակութիւն եւս վերջ:)

3. Արեւակը երկրի տակէն արեւմուտքէն արեւելք անցնելէ վերջը դարձեալ մարդիկներու աշխարհը կ'ելլէ: Արեւու ծագիլը Շնորհալիի յիշած հանելուկին մէջ ծնանիլ բառով բացատրուած է. «մանուկ, որ ծնանէր»: Իսկ Վանեցիներու կարծիքը, թէ արեւամայրը կը բալուէ եւ կը դիեցընէ արեւը, կ'ենթադրէ նորածին երեխայ մը: Եզրիպտացիներու Ռան ամէն օր նոր կը ծնի:

Խաւարի ոգիները որոնք մինչեւ հիմայ տիրապետած էին երկրի վրայ, այլ եւս անոր լոյս երեսին առջեւէն խոյս կու տան եւ իշխանութեան ասպարէզն արեւուն կը ձգեն: Սրուանձտեանց¹⁰³ վանեցիներու մասին կ'ըսէ. «Այն տեղի առաւօտը՝ ո'չ արեւածագումն է եւ ո'չ քաղաքակրթեալ տեղերու պէս՝ արեւածագումէն քանի մը ժամ ետքը. այլ՝ երբ լուսոյ աստղը իր գլուխը կը բարձրացընէ: Այս վայրկենիս Այդեստանեայց եկեղեցեաց ժամհարները տանիքն ելած երեսներն երիցս կը խաչակնքեն. «Գողու ժամ» կը զարնեն. գողերը կ'անհետանան, դեւերը կը հալածուին եւ դադանները որջերը կը քաշուին»: Նորածագ դիւահալած արեւակը մեծ յարգանք կը դնէ ժողովուրդէն: Բաղմավաստակն Լալայեան¹⁰⁴ կ'ըսէ. «Վարանդայում դեռ մինչեւ այժմս էլ ծերունիներ եւ պառաւներ կան որոնք պաշտում են արեւակ եւ լուսին: Շատ անգամ պատահում է որ սրանք ծունր են չորում նոր ծագող արեւակի... առաջ եւ աղօթում նրան այսպէս. «Աստծոյ ցնծուղն տուած ըրիզնակ... իմ երեսս քո ոտանդ տակը, դու իմ խոխէքս պահես»: Նոյն տեղը եթէ գիշեր ատեն մէկն օձ — որ անսուրբ՝ եւ չար աստուածներու կենդանի կը համարուի — վերաւորէ մեռցընելու դիտումով, օձը չի սատկիր մինչեւ արուսեակի ծագիլը¹⁰⁵: Մարդագայլերը, գոռնաթափ-

¹⁰³ Մանանայ, էջ 40: Abeghian, անդ, էջ 37: Մատիկեան, անդ, էջ 260:

¹⁰⁴ Ա. Ղ. Ղ. Հ. Բ., էջ 216: Նոյնպէս նաեւ Գանձակի մէջ, 2, էջ 344, եւ այլուր: (Շատ հաւատարմութիւնը հեթանոս հայուն սրտին մէջ մեծ տեղ զբաւած ըլլայ: Ասոր դորաւոր փաստ կրնանք նկատել «Արեւադալի ժամը», որ անշուշտ հեթանոսական սիրելի պաշտօնի մը տեղը զբաւած է, բնականաբար մերժելով ամէն ինչ որ հեթանոսական է եւ տալով անոր քրիստոնէայ նկարագիրը:

¹⁰⁵ Ա. Ղ. Ղ. Հ. Բ., էջ 243:

եւ սեռէ անձեր կը ցատկեն հրաշագործ բո-
ցերուն վրայէն: Կիներն ու աղջիկները «ո՛չ
բորոտիմ, ո՛չ բորոտիմ» ըսելով պար կը
բռնեն կրակին շուրջ: Անոր բոցերը կենդա-
նիններն տնփնաս կը պահեն չար աչքէ եւ
ստերջ կիներու ամբողջութիւնը կը բառնան:
Ծուխին արեւելք ու հարաւ, դէպ ի արտերը
կամ հակառակ ուղղութեամբ ծառանալէն
կը գուշակեն լաւ կամ դէժ տարի, հունձք,
ամուսնութիւն եւ այլն: Մնացորդ ածուխն
ու մոխիրը տան առատութիւն կը շնորհեն եւ
արտերուն — եթէ ասոնց մէջ թաղուին —
բերրիութիւն: Հոռոմայեցիները Պալիլիա կո-
չուած տօներուն կրակի վրայէն կ'ոստ-
նուին¹¹⁴ եւ ի պատիւ Ապոլլոնի կրակի
մէջէն կ'անցնէին¹¹⁵: Նոյնպէս կ'ընէին նաեւ
հուլիներն իրենց հօտերուն հետ: Յոյները
սրբող զօրութիւն մը կը վերագրէին կրակին
եւ յարդի խարոյկներու վրայէն կը ցատ-
կէին¹¹⁶: Կիները ոստումի ժամանակ կ'ըսէին.
«Մեղքերս կը թօթափեմ»¹¹⁷: Գերմանական
սովորութիւնները շատ նման են հայկական-
ներուն: Յունիս 24ին կը կատարուին անոնք:
Կը հաւատան որ կրակը մարդկան եւ անա-
սուններուն առողջութիւն կը շնորհէ՝ եթէ
մէջէն կամ վրայէն անցնին. դարձեալ՝ թէ
դաշտերն ու արտերը բերրի կ'ըլլան, եթէ
խարոյկին ածուխը կամ մոխիրն անոնց մէջ
թաղուի¹¹⁸: Թէ՛ քաղաքներու եւ թէ՛ գիւղե-
րու մէջ կ'ոստնուին կրակին վրայէն. նոյն
օրը դեռ մինչեւ հիմայ կրակ դարձած անիւ-
ներ կը նետեն օդ՝ կամ լեռնէն վար կը
գլորեն: Հին ժամանակ այս սովորութիւն-
ները Բալթեր դարնան արեւադիւքին համար
կ'ըլլային: Նոյնպէս սովոր էին նաեւ Սլաւ-
ները¹¹⁹, որոնց գեոառի աղջիկներն ու երի-
տասարդները կրակի վրայէն կը ցատկէին:

Ասկից դատ արեւը շատ տեղ ուղղակի
ամուսնութեան եւ ծնունդի աստուածն է:
Վասպուրականի¹²⁰ մէջ հարսանիքի յաջորդ
առաւօտը թագուհին ու թագաւորը տան
կտուրը կ'ըլլեն. հոն՝ արեւելք դարձած եւ
երկուքը միասին թաշկինակի մը ծայրերէն
բռնած կը կենան, մինչ «ազապները» երգ

եւ պարով «արեւ» կը մաղթեն ամուսին:
Ջաւախքի եւ այլ տեղերու սովորութիւնն
այս է, որ մանկաբարձը նորածինը գրկած՝
տանիք կ'ըլլէ եւ արեւուն դարձած՝ տղուն
համար կ'աղօթէ. «Աստուած տղիս դամաթը
բաց էրա¹²¹»: Բուլանլիսի մէջ¹²² ծնունդի
յաջորդ օրերն ալ նոյն բանը յառաջ կը տանին
եւ ծնունդէն քանի մը օր յետոյ կ'նոջ ծննդա-
բերած տեղը խոտի դէպ մը կը վառեն.
ծննդականը՝ երեխան գրկած եւ չամփուրով
մը չար ոգիներուն դէմ զինուած՝ երեք ան-
գամ «տէրընտաղ» ի վրայէն կ'անցնի եւ նոյն
չափ շուրջ կը դառնայ: Մնացորդ մոխիրը
տղուն բարձին տակ կը դրուի, որ չվախ-
նայ եւ ցաւ չունենայ¹²³: Շուշիի ծննդաբեր
կինը — իբր անսուրբ 40 օր արեւու երես
չի՛ տեսներ. այս ժամանակամիջոցը լրանա-
լուն պէս՝ տնեցիները դաշն «արեւի երեսը
դուրս» կը բերեն, որ անոր բարի ազդեցու-
թեան ենթարկուի¹²⁴: Մեքսիկացի մանկա-
բարձը նորածին երեխան աստուածներուն
յանձնելու պահուն կ'ըսէր. «Տղա՛ս, Օմէ-
տէքուտլի եւ Օմէցիութլ (արեւու եւ լուսնոյ
աստուածները) զքեզ այս դժբախտ երկիրը
զրկեցին¹²⁵»:

Աստեղական կեանքէն վերջը կու գայ
անդէմակամը. հոս ալ արեւը կը շարունա-
կէ իր յարաբերութիւնները մեռած մար-
դուն հետ: Մեր քով շատ տեղեր¹²⁶ — Վա-
րանդա, Սիսիան, Ջանգեղուր, Համչէն եւն —
հիւանդը հոգին աւանդելուն պէս՝ դիակին
երեսն արեւուն կը դարձնեն: Ախալքալաք-
ցիներու համաձայն «կեանքի կճուճները»
պահող ծերունին արեւելք կը նստի¹²⁷: Քանի
որ արեւուն եւ ննջեցեալին մէջ կապ կայ,
բնական է արեգական որպիսութենէն կարելի
է եզրակացնել մեռելին որպիսութիւնը. եթէ
մեռած օրը «օր ու արեւ, կամ արեւ ու բա-
րեւ է», կ'իմանան որ արդար է ննջե-
ցեալը¹²⁸: Իսկ ասոր հակառակ եթէ անձրեւ
դայ, կարծես թէ իբր պատիժ՝ 40 օր կը
տեւէ: Արեւու մար մտնելէն յետոյ թաղում
չեն ըներ, վասն զի դիւեր ատեն չար ոգի-
ները կ'իշխեն երկրի վրայ, ուստի եթէ թա-
ղեն՝ կերպով մը անոնց հաճոյքին եւ իշխա-

¹¹⁴ Preller, *անդ.*, I, էջ 216—218:

¹¹⁵ Վերդիլիս, *Ենէական*, ԺԱ:

¹¹⁶ Dr. Bartoszewski, *Religions-wissenschaftliche Vorträge; Arische Familie, III, Die Religion und Mythologie der Griechen*, էջ 67:

¹¹⁷ Preller, *անդ.*:

¹¹⁸ Religion und Kultur, *անդ.*:

¹¹⁹ Orelli, *անդ.*, II, էջ 354:

¹²⁰ Ազգ. Հայ. Ի, էջ 154: Հմմտ. 2, էջ 344: Մատիկեան, *անդ.*, էջ 287:

¹²¹ Անդ, Ա, էջ 266. Գ, 229. Գ, 89. IX, 252:

¹²² Անդ, 2, էջ 126:

¹²³ Անդ, Ա, էջ 272:

¹²⁴ Անդ, Բ, էջ 150:

¹²⁵ Orelli, *անդ.*, II, էջ 413:

¹²⁶ Ազգ. Հայ. Ի, էջ 172. Գ, 242. Գ, 402. 2, 344. X, 168. *եւն.*:

¹²⁷ Անդ, Ա, էջ 369:

¹²⁸ Անդ, Ե, էջ 175:

136 երբեմն, Ը, 1:
137 Վարդան վարդապետ, Պատմութիւն, Վենե-
տիկ 1862, էջ 2—3:
138 «Արարչականի» մէջ:
139 Ալիշանի քով, անդ, էջ 89:
140 Ա. Գ. Բ. Հանդ. IX, էջ 269:

ու ջերմութիւնը: Յետոյ այդ ամանը երկնա-
կամարին վրայ հաստատեց՝ բերանը դէպ ի
երկիր դարձուցած, այնպէս որ անոր լոյսն
ու տաքութիւնը երկրի վրայ կը յորդէ: Իսկ
հիմայ մեր տեսած արեգակը «կճռուծի»ն բե-
րանն է:

Արեւու մասին ժողովրդական ըմբռ-
նումները համատարած ուկրաինի մը կը
նմանին, որուն մէջ սուգուած է ազգերու
ուսմիկ հաւատքը: Մենք քանի մը կաթիլ
միայն դուրս հանեցինք այդ ծովէն եւ հա-
մառօտ զննութեան մ'ենթարկեցինք:

* Ա. Գ.



ԳԵՐՁԵԸ «ՄԻԽԹԱՐԵԱՆ» ԱՆՈՒՆ ՅՈՒՋՐ

1837ին Eugène Boré այցելած է Վիեննա,
Միխթարեանց վանքը. իւր տպաւորութիւն-
ներն եւ յիշողութիւնները դրի առած է ապա
նոյն տարւոյն Նոյեմբեր 16ին ի Տրիեստ:
Հոս ի մէջ այլոց կը խօսի Բորէ Միարանու-
թեան ի Տրիեստ սկզբնաւորութեան մասին.
եւ կը գրէ¹. «Le vénérable supérieur, Dieu-
donné Babik (իմա՝ Աստուածատուր Բաբի-
կեան), avait été sacré en 1800, à Venise,
archevêque d'Eczmiazin; et, le premier, il
avait donné à ses religieux le nom de Méchitharistes, [իմա՝ 1773ին] que ne portaient
point encore les pères de Saint-Lazare, appelés
alors Antoniens, du nom de Saint-Antoine,
dont ils avaient pris d'abord la règle pour
base».

Այս տեղեկութիւնները լսած է Բորէ
անշուշտ ի Վիեննա, ծերագոյններէ եւ Գեր.
Բաբիկեանի († 1825) աշակերտներէն:
1840ին, երբ լոյս տեսաւ է. Բորէի գրու-
թիւնը, Ս. Ղազարու ծերագոյնները չրո-
ղոքեցին անոր տողերու դէմ. անոնք լռեցին
նաեւ 1893ին, երբ Հ. Գ. Գալէմբարեան
նոյն միտքը կը կրկնէր. դար մը ետքը
միայն (1926) կ'անդրադառնան Ս. Ղազարու
Մեծ. Հարք մտքի մը անճշդութեան, որ
90 տարիէ ի վեր հրապարակին սեպհակա-
նութիւնն եղած էր: Ձէր կրնար պահան-

ջուրի ոչ Հ. Գալէմբարեանէ եւ ոչ Հ. Ակի-
նեանէ, որ անոնք է. Բորէի տողերու ստու-
գութիւնը փորձէին Ս. Ղազարու Դիւանին
մէջ պահուած վաւերագրներու հիման
վրայ²: Այս պարտքն էր անոնց, որոնք
կը կասկածէին Բորէի արժանահաւատու-
թեան վրայ եւ կարող էին հերքել տուեալ-
ներու հիման վրայ:

Բայց եւ այնպէս եւ փորձեցի քրքրել
հրապարակի վրայ ծանօթ եւ անծանօթ
գրքեր եւ թղթեր (տե՛ս Հ ա ն դ է ս Ա մ Է
ս օ ր ե ա յ, 1929, էջ 525—532) եւ փորձի
ենթարկել Բորէի տողերուն արժանահաւա-
տութիւնը. իմ քննութիւններուս արդիւնքը
լիովին արդարացուց անոր տողերու ստու-
գութիւնը եւ պատմութեան հետ համաձայ-
նութիւնը:

Բայց Մեծ. Հ. Ղ. Տայեանի համար հա-
մողիչ չեն երեւցած իմ ապացոյցներս: Եւ
կը գտնենք զինքը միւսանգամ խորամուխ
Ս. Ղազարու Դիւանին մէջ, ուր կը հետա-
գօտէ թղթեր եւ արձանագրութիւններ, ցոյց
տալու համար ի նպաստ «Միխթարեան» ա-
նուան նոր տեղիքներ 1774 թուականէն յա-
ռաջ: Իր աշխատութիւնը ընդունայն չէ
եղած. գտած է 60 տեղիք 1752—1772 շրջա-
նէն, ուր կը յիշատակուի նոյն յորջորջանքը
մասնական եւ հաւաքական ձեւի մէջ:

Այս նոր դիւանական նիւթերէն կը տես-
նուի թէ՛

ա. Կան ի Ս. Ղազար անհատներ
(5 թուով), որոնք սիրած են իրենց անուան
կից անբաժին կրել «Միխթարեան» յորջոր-
ջումը:

բ. Կան ուրիշներ, որոնք պատահաբար
միայն ստորագրած են իրենց թղթերու տակ
«Միխթարեան», ասոնց թուին մէջ է նաեւ
Գեր. Ս. Մեղրոնեան Արքահայր:

գ. Կան տեղիքներ, ուր նաեւ արտա-
քինք, նոյն իսկ անգամ մը Հոռմի Դիւանէն
(1762) Ս. Ղազարու Հայ Միանձանց համար

² Վիեննայի Միխթարեան Դիւանին հնագոյն
նիւթերը կը սկսին 1770ական շրջանէն: Անոնք բե-
րուած են Ս. Ղազարէն հաւանօրէն այն Հայերու
ձեռքով, որոնք յիշեցան 1773—1774 տարիներուն
կու տարագրեալներուն: Անոնց թուին մէջ էին
այլ 15 Հայեր: Ոմանք ապա չկարենալով դիմանալ
Տրիեստեաններու տնտեսական ծանր պայմաններուն՝
կրկին վերադարձան ի Ս. Ղազար, Ազոնց Գեր.
րական Արքայ: Բուզայեան հետք տարաւ Մուրա-
տեան կտակը:

¹ E. Boré, Correspondance et mémoires d'un
voyageur en Orient. t. I. Paris 1840, p. 57.